ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴՐՈՇԸ ԾԱԾԱՆՎԵԼ Է ԿԱԶԲԵԿ ԼԵՌԱՆ ԳԱԳԱԹԻՆ

07.09.2015 18:10

ՀՀ փաստաբանների պալատի դրոշը ծածանվել է Կազբեկ լեռան վրա: Փաստաբան Լևոն Հովհաննիսյանը (արտոնագիր 1789) սիրում է զբաղվել լեռնագնացությամբ: Վերջին տարիներին նա հաղթահարել է բազմաթիվ լեռնագագաթներ Հայաստանում և Արևմտյան Հայաստանում: Փաստաբանը բոլոր գագաթները հաղթահարելիս ծածանել է Փաստաբանների պալատի դրոշը:

Մինչ օրս Փաստաբանների պալատի դրոշը 2012թ. ծածանվել է Արարատ և Արագած և 2013թ. Սիփան լեռների գագաթներին: Սեպտեմբերի 2-ին Լևոն Հովհաննիսյանը 4 հոգանոց արշավախմբի կազմում հաղթահարել է Կազբեկ լեռնագագաթը, որը համարվում է Հարավային Կովկասի ամենաբարձր լեռնագագաթներից մեկը:

Հ. Գ.

Կազբեկ *լեռնագագաթ Մեծ Կովկասի լեռնաշղթայում, գտնվում է Վրաստանի Հանրապետության տարածքում: Բարձրությունը 5033 մ է:*

Անվանումը տվել են ռուսները 19-րդ դարի սկզբին: Մինչև ռուսների գալը լեռան ստորոտում գտնվող գյուղին տիրում էր տեղացի իշխան Կազիբեկը, որի անունով էլ աուլը կոչվեց Կազիբեկի, իսկ աուլի անունով էլ դիմացի լեռը՝ Կազբեկ:

Վրացերենով լեռը կոչվում է Մղինվարշվերի, որը նշանակում է «սառցային լեռ», իսկ օսեթերեն՝ Ուրսխոխ՝ «սպիտակ լեռ»:

Լուսանկարները Լևոն Հովհաննիսյանի անձնական արխիվից:

02/09/2015



02/09/2015



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })